

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի  
**2023 թվականի փետրվարի 08-ի** թիվ 2 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԳՀԾՁԲ-2023/01**

Պատվիրատուն՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, որը գտնվում է **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 4, Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ներդրումային ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության թարմացման և փորձաքննական գործընթացում աջակցության ծառայությունների** մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **14-րդ** օրվա ժամը **16:00**-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, **2023 թվականի փետրվարի 22-ին ժամը 16:00**-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Հեղինե Բաբաջանյանին**:

**Հեռախոս՝ 010 54 21 76**

**Էլ. Փոստ՝ [procurement@armroad.am](mailto:procurement@armroad.am)**

**Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**